ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/17-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** 04.08.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Հովհաննիսյանի, ով գործում է «Արֆարմացիա» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 31.05.2023թ.կնքված № ԳՀԱՊՁԲ-23-9/17-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և №2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 158 400 (մեկ հարյուր հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 11.12.2023թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում ոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի № 1 և №2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արֆարմացիա» ՓԲԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, 0064, Րաֆֆու 111 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 163008100220 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02505735 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | գլխավոր տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-23-9/17-5 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Գնման առարկայի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/h | CPV կոդը | CPV անվանումը | անվանումը | Չ/Մ | Քանակ | միավորի գինը (ՀՀ դրամ) | գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը՝ ոչ ուշ քան 05.12.2023թ. |
| 12 | 33691176/12 | այլ դեղորայք | վենլաֆաքսին (վենլաֆաքսինի հիդրոքլորիդ) venlafaxine (venlafaxine hydrochloride) | հատ | 1,200 | 132 | 158,400 | 1,200 |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-23-9/17-5 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/h | CPV կոդը | CPV անվանումը | անվանումը | վճարումը նախատեսվում է իրականացնել 2023թ., համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | |
| | | | | երրորդ եռամսյակ | չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ. |
| 12 | 33691176/12 | այլ դեղորայք | վենլաֆաքսին (վենլաֆաքսինի հիդրոքլորիդ) venlafaxine (venlafaxine hydrochloride) | 158,400 | 158,400 |
| | | | | | 158,400 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | «Արֆարմացիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |